

պոսական Մաշտոց, անթուական, — Հոռոմ  
գանուող ուրիշ երկու եպիսկոպոսներու հետ  
Սարգիս եպս. Ծննդոյ (Եւդոկիացի) կը վկայէ.  
“Ես եօթանասուն ամ գործ եմ ածեր սոյն ա-  
րարողութիւնն հաստատ է, :

#### 4. ՅԱՆՎԱՐՈՍ-ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊ. ՔԵՆՆՈՒ ՕՂԼՈՒ ԱՌԱՊԵՆՆ

Վերն էջ 88—90 յիշատակած էի Ֆրադր  
Մարգինոսի “Գիրք գաւազանաց, հայ թարգմա-  
նութեան ստուար մէկ ձեռագրին ընդօրինակու-  
թիւնը սոյն Արքեպ.ին ձեռօք ի Հոռոմ 1743ին,  
որ եւ աւարտած է նոյն տարին Մայիս 20ին:  
Ուշադրութենէս վրիպած է սոյն տեղեկութիւնը  
նկատողութեան առնուլ Պրոխորոնի եւ սոյն  
Արքեպ.ին ի Սկիւտար Կ.Պոլսոյ հանդիպած ժա-  
մանակն որոշելու խնդրոյն մէջ՝ վերն էջ 247/8,  
որով յարմար տեսած էի այն հանդիպումն  
1743—45 տարիներու մէջ զետեղել, մինչ-  
դեռ վերոյիշեալ յիշատակարանին համեմատ՝  
յիշեալ Արքեպ.ն 1743ի սկիզբն արդէն  
Հոռոմ էր՝ 1742 Օգ. 15ին ի Հաճին Եպս.  
ձեռնագրուելէն ետեւ. նոյն տարւոյ աշնան  
արդէն Պրոխորոնի հանդիպած եւ հաւանա-  
կանաբար Պոլսէն դէպ ի Հոռոմ ուղեւորած  
պիտի ըլլայ:

Նոյնպէս էջ 262 գրուած Ղազար ա-  
նունը պէտք է ուղղել՝ Ղուկաս եւ էջ 269  
Անկիրանու պէտք է ուղղել՝ Անկիրիայ: